ՀՏԴ 82

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ ՀԱՄԱՔԱՅԼ

Լ.Ս.Գրիգորյան

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Սույն հոդվածում նպատակադրվել ենք համառոտակի ներկայացնել բանաստեղծ Վարդան Հակոբյանի անցած գրական ճանապարհը, դիտարկել ու վերլուծել բանաստեղծությունները ու պոեմները, վերհանել այն բնութագրական գծերը, որ յուրահատուկ են նրա ստեղծագործությանը:

Վ.Հակոբյանը իր ասելիքն ու ասելաձևը ունեցողի վստահ քայլով է ոտք դրել պոեզիայի շեմին, մեկը մյուսի ետեւից հրապարակ հանելով «Մենեղեիներ» (1970), «Սեր եւ ժպիտ» (1973), «Մայրանում է լույսը» (1975), «Ծառի անունից» (1978), «Անմարելի-անմեռնելի» (1981), «Մի կռունկ անցավ» (1983), «Վաղվա աչքերով» (1987) եւ մյուս ժողովածուները, որոնք իրենց վրա կրելով ինքնատիպության կնիքը, հաստատության մի-մի աստիճան էին բանաստեղծի համար:

Բանաստեղծի ծնունդը առաջիններից մեկը ողջունելով՝ Ժան Անդրյանը գրեց, թե Հակոբյանը համապարփակ ընկալումների բանաստեղծ է, կյանքի երեւույթների շուրջը փիլիսոփայելու նախասիրություն ունի: «Այս երեւույթը,- անմիջապես ավելացնում է գրաքննադատը,- նրան տանում է դեպի հակասական բնեռներ՝ մի կողմից բանաստեղծական հայտնություն, մտածողության ու պատկերի թարմ գեղեցկություն, մյուս կողմից՝ խճճվածություն ու մշուշ ասելիքի եւ ասելաձեւի մեջ»[1]: Այդ մտահոգությունը անտեղի չէր: Երիտասարդ բանաստեղծը՝ լինելով իր ժամանակի ծնունդը, անտարբեր չմնաց գրական այն շարժումից, որ սկզբնավորվեց 1970-ական թվականներին. ասպարեզ եկած բանաստեղծների նոր սերունդը, որին ընդունված էր «գարունականներ» անվանել («Գարուն» ամսագրի անունից, որի շուրջն էին համախմբված նրանք), տարվելով տեխնիկական նորաբարությամբ, գնդեռադասում էր երեւույթների եւ կյանքի առօրյա փաստերի պատճենահանումը, ձգտում բանաստեղծական գյուտաբարության, այլ կերպ ասած՝ «հայ բանաստեղծության ծառի նորացման՝ օտար պատվաստով»: Պիտի նկատել, որ Վարդան Հակոբյանը, ի տարբերություն իր շատ սերնդակիցների, շուտ թոթափեց նորաձեւության փորձերը, գնդեռադասելով մեր դասական բանաստեղծությունից բխող ձեւերը, դառնալով, ինչպես իր գրչընկեր Հովհաննես Գրիգորյանն է նշում, «կանոնիկ ոտանավորի հետեւորդ»:

Ինչպես յուրաքանչյուր իսկական բանաստեղծ՝ Վ.Հակոբյանը նույնպես խորապես ըմբռնում է պոեզիայի դերը, ճշմարիտ երգի, բանաստեղծության արժեքը, այլապես չէր ասի՝ «բանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը, դեռ ուշանում է»: Իհարկե, սա խիստ չափազանցված բնորոշում է (իսկ գուցե թե ընդհակառակը՝ նորին մեծություն մարդն է ուշանում..., եթե նկատի ունենանք Նարեկացու, Չարենցի, Պ. Սեւակի պոեզիան, չխոսելով արդեն համաշխարհային մյուս գրական մեծությունների մասին), այդուամենայնիվ, բանաստեղծի այս խոստովանությունը գալիս է հաստատելու ոչ այլ ինչ, քան նրա՝ բանաստեղծության նկատմամբ ունեցած խորին ակնածանքը, այն ավելի կատարյալ, իր բառերով՝ «անընդգրկելիի ընդգրկման սահմանների» մեջ տեսնելու շահագրգռությունը.

Երգն էլ պիտի երգի պես լինի,
Լինի շոշափող մատների կրակ,
Իսկ օրվա համար՝ նաեւ զարկնակ:

Եվ կամ՝

Ծիծեռնակի բույնի նման
Սրտի դողով,
Հոգու շողով
Ու հողով է հյուսվում երգը,
Բայց նրա մեջ
Ծվարում է... տիեզերքը:

Բանաստեղծը ձգտում է որսալ ժամանակի ոգին, մխրճվել երեւույթների հորձանուտի մեջ, արձագանքել կյանքի առաջադրած բազմաբնույթ հարցադրումներին, անկախ այն բանից, թե ի՞նչ է երգում՝ բնությո՞ւն, հայրենի՞ք, սե՞ր... Ավելորդ է ասել, որ թեմայի առումով Վարդան Հակոբյանը նորություն չի բերում, նրա երգերի թեմատիկան նույնն է, ինչ երգել ու երգում են բոլոր ժամանակների բանաս-

տեղծները: Եվ դա բնական է, քանի որ, կարելի է ասել, չի փոխվել, նույնն է մնացել բանաստեղծության հիմնական նյութը կամ «օբյեկտը», այսինքն՝ մարդը, կյանքը, աշխարհը... Եվ յուրաքանչյուր բանաստեղծի արժեւորելու համար, ինչպես Պարույր Սեւակը կասեր, չափանիշ պիտի դարձնել ոչ թե այն, թե նա ի՞նչ է երգում, այլ՝ այն, թե նա այդ ինչը ինչպես է երգում: Այս «ինչպես»-ի ամենաառաջին պայմաններից մեկը, թերեւս, ժամանակի զգացողությունն է (հիշենք չարենցյան ձեւակերպումը), չէ՞ որ, ի տարբերություն բանաստեղծության եւ առհասարակ գրականության ու արվեստի հիմնական նյութի (մարդ, կյանք, աշխարհ), մի այլ՝ ոչ երկրորդական նյութ, ինչպիսին քմահաճ ժամանակն է, անընդհատ շարժման մեջ է գտնվում, անընդմեջ փոփոխվում է: Այն, որ Վարդան Հակոբյանը յուրովի է ընկալում եւ յուրովի է մեկնաբանում այս կամ այն երեւույթը, անում ինքնատիպ եզրահանգումներ, ձգտում մոտենալ ժամանակին, բռնել ժամանակի զարկերակը, նրա ստեղծագործության ամենագնահատելի հատկանիշներից մեկն է.

Ժամանակը ճգվում է լարի պես,-
Նվագը երգ է գտնում իր համար,
Կարկաչն աղբյուր է գտնում իր համար,
Առվակը ձոր է գտնում իր համար,
Իսկ ես մաքառման անունն եմ փնտրում:

Ժամանակը զարկում է սրտի պես,-
Տագնապը սիրտ է գտնում իր համար,
Դողը կարոտ է գտնում իր համար,
Իսկ ես մաքառման անունն եմ փնտրում:

Ժամանակը թռչում է հավքի պես,-
Երկինքը թեւ է գտնում իր համար,
Թախիծը վարդ է գտնում իր համար,
Հողը երազ է գտնում իր համար,
Եվ ես անուն եմ դառնում մաքառման:

Ըստ Հակոբյանի՝ բանաստեղծությունը անհայտի հայտնաբերման հավերժական, շարունակական գործընթացի արտահայտությունն է կոնկրետ ժամանակի մեջ: Ու բանաստեղծի անհանգիստ հոգին մղվում է այդ անհայտի որոնմանը, որը ոչ այն է՝ կա, ոչ այն է՝ չկա: Փույթ չէ, որ բնաբական հերոսը չի գտնում իր փնտրածը, դա նրան չի հիասթափեցնում, ընդհակառակը՝ նա նորից ու նորից է «ճամփա ընկնում», այսինքն, չգտնելով՝ չի ավարտում փնտրտուքը: Եվ հեղինակի համար կարծես թե «ճանապարհն հաճույքը հենց այդ անավարտության մեջ է», «գնալ՝ չհասնելու» մեջ:

«Հակոբյանը աշխարհը թարգմանում է բնությամբ»,- գրում է Սերգեյ Սարինյանը: Եվ իսկապես, բանաստեղծը հաճախ է դիմում հայրենի եզերքին՝ իբրեւ ստեղծագործական միջոցի, իրեն հուզող այս կամ այն բովանդակությունը արտահայտելու համար: Արցախի գեղատեսիլ բնությունը, ինչ խոսք, շատերին է հուզել, նրա սեգ սարերի, խորունկ ձորերի, պաղպաջուն գետերի գովքն անող բազմաթիվ բանաստեղծություններ են գրվել, սակայն դրանք շատ հաճախ կրում են «պնդաժային» բնույթ: Հակոբյանը ոչ թե նկարագրում է, այլ բնության տեսարաններն ու բնական երեւույթները իմաստավորելով, տիպականացնելով, դրանց միջոցով ընթերցողին է հաղորդում իր ապրածն ու զգացածը կամ՝ իր ապրումներն ու զգացմունքները:

Վարդան Հակոբյանի բանաստեղծական ժողովածուներից մեկը «Ծառի անուններից» խորագիրն ունի: Ծառի «կերպարին» նա բազմիցս անդրադարձել է հետագայում եւս, դրանով իսկ բնութագրելով մայր ժողովրդի կենսունակությունը, նրա անկապտելի կապը հայրենի հողի հետ: Ահա մի օրինակ.

Թե իր ճյուղերով մոտ է երկնքին,
Ասում ենք՝ վեհ է, բարձր է ծառը:
Բայց չե՞նք սխալվում,-
Ուրիշ կլիներ, եթե իմանանք՝
Որքան է ծառը
Իր արմատներով խորացել հողում:

Հեղինակը հաճախ է դիմում նաեւ լույսի (կամ արեւի) «կերպարին», որը փառաբանվում է ինչպես «Մայրանում է լույսը» ժողովածուի էջերում, այնպես էլ նրա մյուս մեծ ու փոքր գործերում՝ իբրեւ ոգեւորության, ավյունի, ուժի կենսաբեր աղբյուր.

Ու բացվող օրը որպես անցագիր՝
Արեւն է պարզում,-
Եվ կամրջվում եմ նրա ոտքի տակ,
Եվ մայրանում է լույսը իմ ներսում:

Այդպես պոետական խորհրդանշաններ են դառնում բնության մյուս երեւույթները, որոնց միջոցով էլ բանաստեղծը վրձնում է իր ժամանակի ու ժամանակակցի դիմանկարը, եւ ընթերցողը նրա պոեզիայում հաճախ է առնչվում լույսի, ջերմության, սիրո, գեղեցկության ծարավ մարդուն, նրա

հոգեկան ապրումներին ու փիլիսոփայական ընդհանրացումներին:

Արցախյան ազգային-ազատագրական շարժումը նոր երանգներ հաղորդեց Հակոբյանի ստեղծագործությանը, այն հարստացրեց թարմ հղացումներով, հայրենի եզերքի պատկերը նորովի ուրվագծվեց նրա պոեզիայում, առավել նշանակալի հարցադրումներ երևան եկան՝ առնչված մեր պատմությանը, հայ ժողովրդի արցախյան հատվածի ճակատագրին.

Մեկ-մեկ թվում է՝ Դավիթն եմ, վրաս՝
Քառասուն ջաղացքար,
Ձենով Օհանի ձենն է ինձ հասնում:
Մեկ-մեկ թվում է, թե Ավարայրի
Հողն է ոտքիս տակ,
Վարդանանց կռվի ձենն է ինձ հասնում...

Բանաստեղծները, ըստ պուշկինյան ձևակերպումի, ծնվել են «ներշնչանքի համար, սրտագին խոսքի եւ աղոթքի համար»: Բայց ի՞նչ ներշնչանքի մասին կարող էր խոսք լինել Բաքվի շնչի տակ «հարատեւող» հայաշխարհում: Ահա թե ինչու արցախցի հեղինակները ստիպված էին տասնամյակներ ի վեր ներշնչանքի կենդանի շունչը փոխել շինծու, «օրախնդիր» թեմաներով, եւ ահա թե ինչու Արցախյան հզոր շարժումից հետո շատ մոտիվներ, եւ ամենից առաջ հայրենիքի թեման, նոր հնչողություն ստացան նրանց բանաստեղծական հյուսվածքների եւ մտահղացումների մեջ, «անարյուն» մոտիվների փոխարեն իշխող դարձան հավատն ու հեռանկարի պարզությունը եւ այլն: Այս ամենը արցախցի բանաստեղծների մեջ առավել չափով իր արտացոլումը գտավ Վարդան Հակոբյանի պոեզիայում՝ հատկապես «Տաճարն Աստծո», «Ապաշխարանք» բանաստեղծական շարքերում եւ, անշուշտ, նրա պոեմներում, որոնք բացում են հեղինակի տաղանդի՝ մինչ այդ կյանքի չկոչված հնարավորությունները:

«Ես հողի մարդ եմ» քնարական պոեմ-մենախոսությունը մի սրտառուչ ձոն է հողի ու մարդու, տվյալ դեպքում՝ Արցախի եւ արցախցու մասին, նրանց դաշնության, անբաժանելիության եւ, ինչու չէ, փոխադարձ սիրո մասին: Քնարական հերոսը, որ անցել է դաժան փորձությունների միջով եւ որին գուցե թե մայր հողի հանդեպ ունեցած անկաշառ սերն ու նվիրվածությունն են սատարել կրկին տուն դառնալու, այդ տունը կանգուն պահելու, գնրքնական Անթեյի նման ոգեորություն եւ ավյուն է առնում հողից, պատրաստ անհրաժեշտության դեպքում կրծքով պաշտպանելու այն, կտրել չարի ձեռքը, եթե նա հանդգնի՝ «Գնդել ձորերս, խլել ձորերիս փարված օրերս»... Իր պապերից ժառանգած հողը, սարը, քարն անգամ սուրբ մասունքներ են նրա համար, առանց որոնց անհնարին կլինի իր գոյությունը: Ավելին՝ քնարական հերոսն այն կարծիքին է, թե առանց իրեն էլ նրանց՝ այդ հողի, սարի, քարի գոյությունը կլինի անիմաստ, քանզի ինքը այդ սարի կնոջ է, այդ քարի կնոջ է, իսկ կնոջ առանց մյուս կնոջ չի լինում.

Քարերին թե ես ասեմ՝ թռեք,-
Մի վայրկյանի մեջ թեւ կառնեն-թռչեն,
Սարերին ասեմ՝ ինձ հետ քայլեցեք,-
Ձեզ թողնի խոսքս բերնիցս դուրս գա,
Հանդերին ասեմ՝ կանաչ մնացեք,-
Գորգեր կդառնան իմ ոտքերի տակ.
Ախր նրանց հետ մեկ է իմ ճամփան...

Նույն՝ հայրենի երկրի եւ ժողովրդի միասնության գաղափարն է ընկած Վարդան Հակոբյանի մյուս պոեմների հենքում, ուր, սակայն, ընդարձակվել են թեմայի շրջանակները, խորացել ընդհանրացումները:

«Համանվագ» պոեմում, ինչպես նախորդում, հստակորեն գծված որեւէ գործողություն չկա, եւ սյուժետային կառուցվածքի համար հիմք են ծառայում քնարական հերոսի մտորումները իր լեռնաշխարհի անցած՝ արհավիրքներով լի բազմադարյան ճանապարհի մասին: Մտովի իրար կամրջելով անցյալն ու ներկան՝ բանաստեղծը փորձում է գտնել հայրենի երկրի հավերժության, մայր ժողովրդի գոյության, կենսունակության նախապայմանը, որն, ըստ հեղինակի, թաքնված է հայոց անկոտրում, անմեռ ոգու մեջ, ազգային-հոգեւոր արժեքներում.

Գրեր կան հողին,
Որոնք չեն ջնջվել անգամ այն պահին,
Երբ արնոտվել են մեր իսկ արյունով,
Որոնք չեն ջնջվել ոչ մի ժամանակ,
որովհետեւ մեր քարերն էլ գիր են,
որովհետեւ մեր ջրերն էլ գիր են,
որովհետեւ մեր ծառերն էլ գիր են
եւ անգիր գիտեն դասը դալարման,
վերահառնումի,
վերածաղկումի,
վերածնունդի...

«Համանվագ»-ի համար բնորոշ է հետևյալ ուժեղ երկտողը, որը թեւավոր խոսքի արժեք է ստանում.

Հնարավոր չէ ինձ հաղթել երբեք,
Եվ դա չզգալն է պարտությունը հենց:

«Երամականչ» պոեմի հերոսը՝ հարարքի Արշակը, իրական անձնավորություն է, որի կերպարը հեղինակը գծել է մի առանձին գուրգուրանքով, նրան օժտելով մեր ժողովրդի բնավորությանը հատուկ լավագույն գծերով: Արշակը մեկն է նրանցից, ովքեր սեփական մաշկի վրա զգացել են քսաներորդ դարասկզբին Հային վիճակված ողջ սարսափները՝ ավեր, արյուն, գաղթ, հարազատների ու հայրենի տան կորուստ... Այդ ամենը, սակայն, չեն կարողացել նրանից խլել ապրելու, գոյատևելու տենչը: Նրան այլ բան չէր մնում, քան ապրելով վրեժ լուծել մեր դարավոր թշնամուց՝ իր ողջ կյանքում կոծքի տակ անթեղված պահելով մի նվիրական փափագ, մի սրբասուրբ ուխտ.

Դավիթ-Բեկի ձին հեծնեմ ու գնամ,
Գտնեմ մեր կորած տան-դրան ճամփան...

1992 թվականի գարնանը վերջապես ի կատար է ածվում այդ բաղձանքը. հայոց Շուշիի հետ մեկտեղ գերությունից փրկվում է նաեւ Հարարը, ինչը, ավաղ, չտնսավ ծերունին: Պոեմը ընթերցողի մեջ մի ազնիվ հավատ է ներշնչում՝ այն, որ մի օր էլ Տիրոջ Աջի զորությամբ ու օրհնությամբ պիտի բացվեն մեր կորսված մյուս շեներն ու քաղաքները տանող ճամփաները...

Մեզ պարտադրված Արցախյան պատերազմի մասին շատերն են գրել՝ թե արձակ, թե չափածո: Եվ բոլոր հեղինակները առավել կամ նվազ հաջողությամբ ձգտել են տալ հաղթանակած ժողովրդի հերոսական պաթոսը, ու գրեթե մոռացվել կամ անտեսվել է պատերազմի իսկական դեմքը, նրա թողած կործանարար հետքը մարդկանց ճակատագրերի վրա: Այս առումով առանձնանում է Վ.Հակոբյանի «Գողգոթա» պոեմը կամ՝ տենսիլ-նովելը, որը սիրո, ցավի, կորստի, նվիրումի մի իսկական համաձուլվածք լինելով հանդերձ, հերոսապատում է միաժամանակ: Ցնցող են իրար հաջորդող տեսիլները, դաժան, բայց եւ ճշմարիտ՝ գինվորի այրու կրակված հոգու անդրադարձները. «Հայր չի մեռնում: Երեւի մենք, որպես ժողովուրդ, միակն ենք, որ չենք մեռնում խաղաղ, տարիքն առած, բնական մահով: Մենք նահատակվում ենք, մենք զոհվում ենք... Անցնում ենք սրբերի շարքը, եւ դրանով իսկ, սրբանում է մեր հողը: Դրանից է, որ հայոց հողի վրա ծաղիկները քաղցր են լինում ու չթառամող՝ որպես սերը նահատակների»...

«Մաշտոցն Ամարասում» պոեմը մի հաջողված փորձ է գեղարվեստորեն վերարտադրելու եւ իմաստավորելու ամենամեծ Հայի Հայոց Արեւելից կողմանց գործունեությունը, որը փաստորեն դուրս էր մնացել հայ գրողների տեսադաշտից: Ինչպես ավանդությունն է հուշում, Մեսրոպ Մաշտոցն առաջին դպրոցներից մեկը հիմնել է Ամարասում, եւ ահա այս ժլատ փաստը ատաղձ դարձնելով, միաժամանակ իր ստեղծագործության մեջ բնակեցնելով ուրիշ այլ պատմական դեմքերի (Վարդան Մամիկոնյան եւ այլք), Հակոբյանը շեշտում է այն միտքը, որ հոգեւոր ու ֆիզիկական ուժի միասնությամբ միայն կարելի էր դիմակայել այն բազում արհավիրքներին, որ հայ ժողովուրդը հանդիպել է իր երկարամյա ճանապարհին.

Ոչ միայն սուրը,
այլ նաեւ գիրը
պետք է վահանով մտնի ասպարեզ
եւ պիտի պահել զուգակշռություն:

Բանաստեղծը ոչ առանց օրինական հպարտության՝ փաստում է, որ Մ. Մաշտոցի եւ Վ. Մամիկոնյանի հիշատակը անմեռ է մնացել մեր ժողովրդի սրտում, եւ որ նրանց քաջազնական ոգու վերադարձն էր Արցախյան համազգային շարժումը, որի շնորհիվ ծնկած վիճակից բարձրացավ ազգը հայոց: Ուշագրավ է պոեմի ավարտը.

Ժողովուրդը, որ տառեր է գրում
անգամ իր թրին,
Աշխարհում նրան հաղթող չի լինի,
Առավել ես՝
Ժողովուրդը այդ չի մնա գերի:

Մեր խնդրից դուրս է այս, ինչպես եւ մյուս պոեմների մանրամասն վերլուծությունը,[2] կկամենայինք սակայն ընդգծել, որ հանձինս Վարդան Հակոբյանի «Մաշտոցն Ամարասում» պոեմի՝ հայոց մաշտոցապատումը հարստացել է մի նոր էջով:

Խոսելով Հակոբյանի ստեղծագործությունների մասին, Ս.Սարինյանը իրավացիորեն նշում է, որ առ այսօր հայոց արցախապատումի գեղարվեստական չգերազանցված նմուշներ են մնում նրա «Տաճարն Աստծո» վիպերգը եւ «Քրիստոսի

ծաղիկներ» ասը՝: Այս կտավներում նույնպես շարունակելով որոնումները՝ գտնելու համար պատմական ու քաղաքական այն կարևոր առնչությունները, շնորհիվ որոնց կանգուն է մնացել Արցախատունը, հեղինակը նոր գույներով է հյուսում հայ մարդու հոգևոր ու ֆիզիկական մաքառումների առասպելը, նոր կողմերով բացում հայրենիքի կերպարը: Հակոբյանի պոետական մտածողությունը կաղծես չի տեղավորվում ավանդական ձևերի ու հանգերի մեջ. ներսում կուտակումներ տվող նյութը, չհանդուրժելով չափ ու սահման, ինքնաբուխ հորդում է՝ ստեղծելով մի ուրույն պատումառոճ, չափածոյի նեղ ու արձակի մի յուրօրինակ սինթեզ: Բանաստեղծը զարմանալի հմտությամբ իրար է շաղկապում հին ու նոր ժամանակները, տասնյակ ու տասնյակ հնօրյա ու մերօրյա դեպքեր ու դեմքեր, տեղանուններ, հիշատակարաններ, որոնց միջոցով էլ «հայտնաբերում է» պատմական ճշմարտությունը:

Եթե «Քրիստոսի ծաղիկները» երկի հիմքում ընկած են նորօրյա իրադարձություններ, կոնկրետ՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը, որն, ի դեպ, տրված է իր ողջ մերկությամբ, այսինքն՝ թե լուսավոր ու թե ոչ լուսավոր հետագծով հանդերձ, «Տաճարն Աստծո»-ն իր մեջ խտացնում է Արցախ հայաշխարհի դյուցազնական պատմությունը նաև իր կառուցվածքով ու գաղափարական բովանդակությամբ ինչ-ինչ աղերսներ ունի մեր ազգային էպոսի հետ: Պոեմում հեղինակին ուղեկցում է ինչպես պատմական ճշմարտությունը, այնպես էլ պատմության զգացողությունը: Անցյալն, այո, չպիտի մոռանալ, ժողովրդին անհնար է զրկել հիշողությունից, ընդսմին, անցյալից պիտի կարողանալ անհրաժեշտ դասեր քաղել ապագայի համար.

Անցյալն, այո, պիտի ապրել
ու վերապրել,
բայց ներկայի հաշվին՝ երբեք,
այլապես մենք կկորցնենք,
ձեռքից կտանք եւ ապագան:

Մենք այն կարծիքին ենք, որ Վարդան Հակոբյանի ստեղծագործությունն, իրավամբ, իր ուրույն տեղն ունի ժամանակակից հայ պոեզիայում, հետևաբար՝ այն արժանի է գրականագիտական լուրջ ուսումնասիրության:

Ամփոփում

Վ.Հակոբյանը ստեղծել է բարձրարժեք բանաստեղծություններ և պոեմներ, որոնք հարստացնում են ոչ միայն Արցախի գրական օջախի հունձքը, այլև իրենց նպաստն են բերում արդի հայ պոեզիայի զարգացմանը: Մեր պոեզիայում Վ.Հակոբյանը գրավել է իր տեղը ասելիքի և ասելաձևի թարմությամբ, գաղափարական խորությամբ, գեղարվեստական հնարանքների ինքնատիպությամբ: Նա յուրովի է ընկալում և մեկնաբանում այս կամ այն երևույթը, կատարում հետաքրքիր ընդհանրացումներ, ձգտում ավելի մոտենալ ներկա օրերին, բռնել ժամանակի զարկերակը: Հայրենիքի մասին լինի նրա երգը, բնության, թե՝ սիրո, նա որոնումների մեջ է և չի բավարարվում ձեռք բերածով, ենթադրելով, թե «քանաստեղծությունը, որի համար ծնվել է մարդը, դեռ ուշանում է»: Այս պահանջը կրկին ու կրկին հաստատում է, որ ասպարեզի վրա է թեկուզ արդեն ճանաչված, բայց անդադար դեպի արվեստի բարձունքները ձգտող իսկական, ճշմարիտ բանաստեղծը:

Резюме

Вардан Акопян из писателей, создавших высокохудожественные стихотворения и поэмы, которые вносят свою лепту в развитие современной армянской поэзии. В армянскую поэзию В.Акопян привнес в свое видение мира, плейную глубину, художественной манеры. Он по своему воспринимает то или иное явления, объясняет его, делает своеобразные обобщения, стремится быть еще ближе к сегодняшнему дню, чувствует пульс времени. Будь его песня о родине, природе и любви, он в постоянных поисках и не уловлетворяется достигнутым, подчеркивая, что "поэзия, для которой родился человек, пока опаздывает". Это требование еще и еще раз подверждает мысль, что, невзирая на его признанность как поэта, он постоянно стремится к высотам поэтического искусства.

Գրականություն

1. Ժան Անդրյան. «Մեր գրական օջախը», Ե., 1979 թ., էջ 130:
2. Նշված պոեմի եւ առհասարակ Վ. Հակոբյանի պոեզիայի մասին տես՝ Ս. Խաչյան. «Ցավի եւ սիրո պոեզիա», Ստ., 1991թ.:
3. Տես՝ Վ. Հակոբյան. «Անդրադարձի տեսիլներ», Ե., 2002 թ., էջ 705: